


ԵՂԻԱՐԴ ԳՈՒԱՆԺՅԱՆ

ՄԵԾ ՍԳԱՎՈՐ ԵՐԳԻՉԻՆ ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏԻՆ

Չէ՛, մեռած չէ՛ քու ձայնդ, մեծ սգավոր
Երգի՛չ, մեծ առաքյա՛լ Հայ Որփետսին, դու
որ քու ձայնիդ մե՛կ ոլորակովը գիտեիր քա-
րերը կակղեցնել, սառած ջուրերը փրփրուն
գուլալ գետերու պես՝ կայտոեցնել: Սարսա-

աշխարհքի քեն ըրած թախծամոռալ անհուն
սիրտդ, երևույթն ունիս դեռ մտիկ ընելու
այն մյուս հեղեղը, Չանկըրըն մինչև Արա-
քիո խորերը արշավող արյունովկիանը ու
վայրահակ առևտարվելու անկե իբրև շա-



Կոմիտաս վարդապետի հուղարկավորության թափոը Փարիզի հայոց
ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցում

փին համադրական տեսիլքը, Հայ թափված
արյունին ընդհանրությենեն սավառնող կրա-
կե հեքին զգայությունը քու ամենագագաց, ա-
մենախմաց էությանդ ներալքերուն մեջ ծրա-
րել տված է պահիկ մը հեղեղանման թավա-
լող ձայնիդ այերովկիանը: Ու դուն մենա-
րանիդ գաղտնապահ խորունկ ստվերներուն
մեջ թաղած քու ըմբոստի վսեմ գլուխդ ու

մանդաղ՝ իբրև ավագահատիկ խոնարհ: Ե-
րեվույթն ունիս, քու ամենագագաց ձայնիդ
գիտուն մեղեդիեն զրկելով աշխարհը, վրե՛ժ
լուծելու աշխարհքեն ու դադրեցնելով՝ ծալ-
լելով քու մեջդ քու բամբ ձայնիդ լեռնացող
հեղեղը, աշխարհը անապատ թողված տես-
նելու, քանի որ Հայ արևշող ավանները մե-
կիկ մեկիկ անհետացան, ու քանի որ հոն

այլևս «կտրալ ձեռնիկը աղբյուրներում»։ Քանի որ քու աստվածային ձայնը հայրենի աղբյուրներում ձեռնիկը ուներ նաև, այն աղբյուրներում ցամքումովը քու ձայնը ալ դադրեցավ վայրկյան մը, քու ներշնչության մեջ սեղմված հառաչանքը եղավ։

Չէ՛, մեռած չէ՛ բնավ քու ձայնը, մեծ սգավոր Երգիչ, անհկա ներսդ կփորե արծիվի ճանկերով...։ Դե՛հ, արթնցի՛ր, մեծ վարդապետ, քու սարսափելի տեսիլքեր, ընդոստ արթնցի՛ր ատելությանդ մոլուցքեն որ ամենուս մոլուցքը եղավ։ Արթնցի՛ր չե՛ս լսեր մեմարանիդ փեղկերում մեջեն ծագող ճշմարիտ Արշալույսին պերճահնչուն լուսե ձայնը, այն վերջնական աստղածորան հեռանորոր արշալույսին որ լեռներու ետին փհենրու վերև տառնալիս պահված կմնար և որում ակնդետ աչքերնին բաց ու սառած մեռան, սպասելեն մեռան թափառական Հայ կարավանները։ Երկաթե ձեռքովդ բաց այդ փեղկերը. նայե Տիեզերքին Արդարությունն է, հաղթանակն է մարտիրոսացած Հայության, սուրբ վրեժի Տոնն է. վսեմ ու հոգևին բաղձածված Անկարելիվյն տեսիլքն է արև ու շունչ եղած, ան որ քու ձայնիդ բարձունքներեն կարտահոսեր ծովացած ու նույն թափով կդառնար կապովտեր մեր հոգիին մեջ։ Նայե՛, նայե՛, թշունջներու արևշող տաքով գեղգեղն է երկա՛ր երկա՛ր անձրևեն վերջ...։ Չե՛ս լսեր մեր հոգիին հառաչանքը, մեր տոչորուն կարոտը քու ձայնիդ լույս հոսումին ետև, մեր անապատային ծարավը չե՛ս իմանար դուն։ Չե՛ս գիտեր թե քու վեհաշունչ ձայնիդ այերհեղեղը կրնա մեր սրտին վերադարձնել նորեն թափված Հայ արյունը, մեր լալեն հոգնած, սպառած սրտին...։ Չե՛ս գիտեր թե քու ձայնը հարությունն է մարտիրոսացած Հայության. չե՛ս գիտեր թե քու ձայնիդ մեջ կծառանան մեր ավերակներու ծխումները, քու ձայնիդ մեջ կթրթռան մեր կոտորած աղբյուրներուն դադրած մրմունջները, անոր մեջ է, որ փայլակի պես կփայլին մեր խողխողված մշակներուն ժանգոտած արորները ու լույսե աղեղներու պես կշկահեն կառկայծին անապատ ակուններու մեջ քնացող բորբոս մանգաղները. ու անոր մեջ է որ շինականին դադրած սիրտը նորեն իր սերը կորոտա ու վայրի խնկահոտ մանիշակաբույր լեռներու Հայ աղջիկը իր պաղած անշունչ երակներուն մեջ նորեն իր արյունին եռնեփիլը կիմանա և իր կոտորած լանջոսկրին տակ՝ նորեն իր սիրույն հառնելը։

Չե՛ս գիտեր թե քու ձայնը այս ամենուն

լուսավետումն է, թրթռագին ընծայումն է դեպի տիեզերական լույսը, ստեղծիչ սերն է որ լույս ալիք ու թրթռում եղած ամենուն սրտին մեջ խորագիծ կապրեցնե բոլոր գեղեցիկ բաները որ մեռան, ծիածանեն մինչև ծով ծով ցորեններուն սեր ստավյունը ուր գոհի նշխարը կհասունանա։ Չե՛ս գիտեր թե քու որոտագին հառաչված ձայնիդ մեջ կգալարվին աշխարհի խիղճը լուսավորող հայ խառույկներուն բոցերը։ Թա՛փ տուր ձայնիդ, վսեմ Երգիչ. ու մեր սրտին լուրջան խողջները լեցո՛ւր ու տաքցուր քու թավալուն գեղգեղիդ լուսալիքներովը, վերապրեցուր մեր հմայաթափ ու տանջված հոգիները։ Վերապրեցո՛ւր մեր ամաչացած դաշտերը ուր թանկագին ոսկորներուն մեջեն վաղը հայ նոր շինականներ նոր ակուններ պիտի բանան սուրբ ցորենին համար։ Օ՛հ, թո՛ղ թույն ձայնդ, նայե՛ մեծ Այգն է...։ Աշխարհն է այլևս, ըստ հայ արդար ձայնին՝ հորինված, ըստ քու ձայնիդ, ըստ ձայնին որ խիղճերուն խիղճինն է, Հայո՛ւնն է։ Օ՛հ, օ՛հ, թե տուր տեսանող ձայնիդ. չե՛ս գիտեր թե քու լուսաբաղձ ձայնիդ գոռացող ըմբոստ կոհակներեն՝ նորեն ոտքի կելլե մեր մահատակներուն ու դյուցազներուն հոծ ամբոխը, ինչպես Ֆաուսթին խորագետ ձայնով՝ ոտքի կանգնած կհայտնվի տիեզերքին Ոգին։ Չե՛ս գիտեր թե քու ոգեկոչող մեծադյուրյ անմահ մեղեդիդ կանգնագեղ անտառի մը բազմությունը կշքանլուծե մեր մեջ։ Այնքան անեծքի ու վրեժի բազմություն մը որքան օրհնության, հիացման ու պաշտումի ծովածավալ անշարժ ամբոխում մը։ Որովհետև քու անմահ ձայնիդ մեջ է որ կապրի ու կշնչե ցեղն ամբողջ իր ամենեն գեղեցիկ վայրկյաններուն մեջ. քու ձայնդ ամենեն փայլուն հոչակումն է մեր գրկվածի ու անիրավվածի դարավոր դատին. քու ձայնդ կբավե՛ որպեսզի աշխարհ սիրե մեզ գիտակցաբար, որպեսզի աշխարհ՝ շախշախված գիտակցությամբ մը մեզի փարի։

Չէ՛, դադրած չէ՛ քու ձայնը բնավ, մեծ Երգիչ։ Ահա՛, կիմանամ մեմարանիդ պատմահանին փեղկերուն շառաչուն բացվիլը։ Առձծե՛ լույսը նոր Աշխարհին, վարդը նոր ճշմարիտ Արշալույսին, ու երգե՛, օ՛հ, պոռթկա նորեն քու ծով ձայնը, ավելի հզոր, ավելի տաք, ավելի թրթռագին։

1918 ղեկտեմբեր 2

Բերա

(«Նոր Հայաստան» գրական հանդես, Կ. Պոլիս, 1919, № 10)